

Լիլիթ ՍԱՐՈՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՀԱՅԱԼԵԶՈՒ ԼՍԱՐԱՆՈՒՄ ԻՍՊԱՆԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ
ՀԱՍԱԿԱՐԳԻ ԴԱՍԱՎԱՆԴՍԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ**

Սույն հոդվածում քննվում են իսպաներենի հնչյունային առանձնահատկությունների դասավանդման այն մոտեցումները, որոնք առավելագույն արդյունավետություն կարող են ապահովել լսարանում։ Հոդվածում դիտարկվում են ինչպես մեթոդական խնդիրները, այնպես էլ սոցիալ-հոգեբանական այն անհրաժեշտ նախապայմանները, որոնց հենքի վրա կարելի է ստեղծել ուսանողակենարուն մոտեցում և ապահովել լիարժեք դասապրոցես, որի ընթացքում ինտերակտիվ մեթոդի և ժամանակակից տեխնոլոգիաների ու դիդակտիկ նյութի կիրառման պայմաններում հնարավոր է ներգրավել բոլոր ուսանողներին և ստանալ առավելագույն արդյունք։ Հնչյունային առանձնահատկությունների դասավանդման ժամանակ հաշվի առնելով հայալեզու լսարանի արտասանական ապարատի առանձնահատկությունները անհրաժեշտ է առավել մանրամասն անդրադարձ կատարել իսպաներենի ձայնավոր և բաղաձայն հնչյունների համակարգին ու դրանց միացություններին և այդ ամենն ամրապնդել վարժությունների ու շուտակելուկների միջոցով։

Քանայի բառեր. հնչյունային առանձնահատկություններ, ժամանակակից տեխնոլոգիաներ, ինտերակտիվ մեթոդ, հոգեբանական միջավայր, երկրարրաներ, սինալեֆա, երարարատներ, շոտասելուկներ, դիդակտիկ նյութեր, ձայնավոր/բաղաձայն

Ինչպես հայտնի է, Հայաստանի բուհական կրթության համակարգում վերջին տարիներին տեղի ունեցող արմատական փոփոխությունները, որոնք կապված են նոր համակարգի ինտեգրման հետ և միտված են առավել զարգացնելու մեր երկրի կրթական համակարգը, իրենց հետ բերում են նոր երևույթների և մերողների կիրառման անհրաժեշտություն։ Բացի արտաքին աշխարհից եկող փոփոխություններից, որոնք նպատակ ունեն համապատասխանեցնելու մեր կրթական ոլորտը միջազգային չափանիշներին, այն է՝ Բոլոնիայի գործընթացը բարձրագույն կրթության ոլորտում և համապատասխան չափորոշիչների մշակումը, կան նաև այսպես կոչված ներքին փոփոխություններ։

Լսարանում ցանկացած նոր երևույթի կիրառման ժամանակ, որոնք հիմնականում արտաքին աշխարհից եկող փոփոխություններն են, կարող են առաջանալ սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններ և խնդիրներ, որոնք ներքին բնույթի են և կարող են մեծ ազդեցություն բռնել դասավանդման արդյունավետության վրա։ Հարկ է նշել, որ արդյունավետությունն իր հերթին պայմանավորված է այդ փոփոխությունները կրող անհատի՝ ուսանողի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով և դրանց նկատ-

մամբ նրա ունեցած պատրաստվածությամբ: Հոգեբանական մի շարք գործոնների կարևորությունն է՝ ավելի է մեծանում օտար լեզվի դասավանդման գործընթացում հատկապես բանավոր խոսքի ժամանակ, որտեղ ի հայտ են գալիս արտասանական ապարատի հետ կապված մի շարք առանձնահատկություններ:

Ցանկացած օտար լեզվի դասավանդման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն սովորողների մայրենի լեզվի առանձնահատկությունները, որոնց համար նախատեսված է համապատասխան դասընթացը: Այստեղ հարկ է հատկապես կարևորել տվյալ լսարանի ոչ միայն մայրենի լեզվին ու, անշուշտ, արտասանական ապարատին և հնչյունային համակարգին բնորոշ առանձնահատկությունները, այլև տվյալ լեզուն կրող ժողովրդի աշխարհընկալումը, արժեքային համակարգը, մտածելակերպն ու ավանդույթները, որը դիպուկ նկարագրել է Լ.Վյզորդսկին:

“Cuando las dos lenguas (la primera o materna y la segunda) tienen valores afectivos, culturales y sociales, los niños construyen sus aprendizajes y desarrollan habilidades de comprensión en el diario vivir del aula, donde interactúan e intercambian experiencias y juicios” /Vygotsky, 1989: 17/:

Հայտնի է, որ մեր օրերում նորագույն տեխնոլոգիաների կիրառումը ցանկացած ոլորտում դարձել է ժամանակակից պահանջներից մեկը, և լեզվի դասավանդման գործընթացը ոչ միայն զերծ չէ այդ ամենից, այլև դրանց կիրառումը դասապրոցեսում դարձել է ժամանակի հրամայական: Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումից զատ, ինչպես արդեն նշել ենք, կիրառվում են նոր մեթոդներ, որոնցից ներկայումս կարևորվում է այսպես կոչված ինտերակտիվ Զիգսու մեթոդը (the Jigsaw technique), որը ենթադրում է դասապրոցեսին ուսանողի լիակատար ներգրավվածություն և դասախոսի քարձը պատրաստվածություն:

Վերոհիշյալ ինտերակտիվ մեթոդը և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը հատկապես կարևոր է հայալեզու լսարանում խսպաներենի՝ որպես օտար լեզվի, դասավանդման գործընթացում: Քանի որ հայերենն ու խսպաներենը պատկանում են տարբեր լեզվաբնուտանիքների, բնականաբար, ունեն բազմաթիվ տարբերություններ, ինչպես կառուցվածքային, այնպես էլ հնչյունային: Հայերենով խոսելիս մենք հետևում ենք հայերենին բնորոշ որոշակի լեզվական օրենքների և նորմերի:

Ինչպես նշում է Պ. Պողոսյանը, որևէ միտք արտահայտելու համար խոսում ենք, այսինքն՝ արտասանում ենք մեր լեզվի օրենքներով միմյանց կապակցված բառեր /Պողոսյան, 1969: 13/: Հայերենը, ինչպես գիտենք, ունի հնչյունային բավականին հարուստ, կուռ և ճկուն համակարգ, և հայալեզու լսարանին խսպաներեն դասավանդելիս կարելի է ստանալ առավելագույն արդյունք, եթե դասախոսը կիրառի ժամանակակից ինտերակտիվ մեթոդը և օգտվի որոշակի տեխնիկական սարքավորումներից:

Այդուհանդերձ, կան որոշակի դրույթներ, որոնք պետք է կարևորել հայալեզու լսարանին խսպաներենի արտասանական և հնչյունային առանձնա-

հատկությունները բացատրելիս, ինչը կապահովի իսպաներենի հնչյունների ճշգրիտ և մաքուր արտաքիրում, հղված և սահուն արտասանություն ու կապահովի իսպաներենին բնորոշ արագություն:

Այսպիսով, ինչպես ճիշտ դասավանդել իսպաներենի հնչյունային առանձնահատկությունները: Առաջին հերթին համապատասխան հայալեզու լարանում անհրաժեշտ է ստեղծել բարոյահոգեբանական համապատասխան միջավայր, որտեղ գերիշխեն ազատ, անմիջական և վատահեղի հարաբերություններ, դասընկերների բարյացակամ և պատրաստակամ վերաբերմունք, որոնց առկայության պայմաններում միայն ուսանողները կարող են միանգամայն անկաշկանդ կարդալ և հղել իրենց արտասանությունը: Նշված նախապայմանների առկայության անհրաժեշտությունը անգերենի ուսուցման գործընթացի օրինակով ներկայացրել են Ս. Կ. Ո. Կատանյոն և Մ. Վ. Դիեստեն՝

Con base en los hallazgos y corrientes educativas enfocadas a la eficacia en la enseñanza de una segunda lengua, retomamos las principales ideas que nos han sido útiles para una mejora en el aprendizaje y dominio del inglés:

- Conocer el desarrollo psico-evolutivo en el que se encuentra el alumno, con el fin de acercarlo al conocimiento en las diferentes etapas de su vida de manera confiable y segura.
- Conocer a profundidad las metodologías y enfoques para la enseñanza de un segundo idioma que dé una perspectiva global del proceso enseñanza-aprendizaje y que involucre no sólo aspectos de la reflexión y uso comunicativo de la lengua, sino también el aspecto humano que comprende su parte afectiva, emocional y social.
- Conocer las diferencias entre las dos lenguas, así como su cultura e ideologías, con el fin de profundizar en la inmersión y comprensión de la misma.
- Que las actividades sean significativas y progresivas, lo cual hace que el alumno encuentre sentido y aplicación a lo que aprende /Cataño, Dieste , 2014: 34/.

Գործնական հնչյունաբանությունը, առավել քանի որևէ այլ առարկա, ենթադրում է ինտերակտիվ մեթոդի կիրառում: Անհրաժեշտ է նախ հայալեզու լարանին համառոտ ներկայացնել տեսական այն կանոնները, որոնց պետք է խստորեն հետևել իսպաներենի արտասանության ընթացքում, հատկապես այն կանոնները որոնք առկա չեն մայրենի լեզվում՝ տվյալ դեպքում հայերնուն: Այստեղ հարկ է նշել, որ ինտերակտիվ մեթոդը, որը այս պարագայում կապահովի ուսանողների անմիջական և անընդմեջ մասնակցությունը և նրանց ներգրավվածությունը ողջ դասաժամի ընթացքում, մեծ արիեստավարժություն է պահանջում նաև դասախոսից: Վերջինից պահանջվում է բավականին պատրաստվածություն և արիեստավարժություն, քանի որ դասի ընթացքը բավականին արագ է, ինչը ենթադրում է, որ դասախոսը պետք է առավելագույն հստակ և դիմամիկ ձևակերպի հարցադրումները, մեծ վարպետությամբ և ճշգրտությամբ ուրվագծի ուսանողների անելիքները, առանց ավելորդ խոսքերի սահուն դեկավարի ուսանողներին, ներքաշի նրանց երկխոսու-

թյունների մեջ, կազմակերպի խմբակային մասնակցություն, ապահովի դիդակտիկ, տեսալսողական և լսողական նյութերով: Խմբակային այս ողջ գործունեության ընթացքում միևնույն ժամանակ դասախոսը պետք է կարողանա նկատել նրանցից յուրաքանչյուրի անհատական գործունեությունը, անհրաժեշտության դեպքում անի հուշումներ առանց ակնհայտ հուշման, մոյնի ինքնուրույն աշխատանքի, ուղղորդի նրանց ակտիվ գործունեությունն ու ապահովի ակտիվ ունկնդրում սոցիալականացման նշված գործընթացում և գրագետ կառավարի լսարանը:


Այսպիսով, հայալեզու լսարանում խսպաններենի հնչյունային առանձնահատկությունների դասավանդումը լիարժեք իրականացնելու և հղկված արտասանություն ապահովելու համար անհրաժեշտ է նախ և առաջ հայ ուսանողներին համառոտ ներկայացնել մայրենի լեզվի՝ հայերենի այբուբենի հնչյունային կազմը, ձայնավոր և բաղաձայն հնչյունների համակարգը՝ անդրադարձ կատարելով դրանց արտասանական առանձնահատկություններին, ներկայացնել հայերենի շեշտի, պատմողական, հարցական, հրամայական և բացականչական նախադասությունների հնչերանքի հետ կապված այն դրույթները, որոնք բնորոշ են հայոց լեզվին, քանզի միմիայն մայրենի լեզվի կատարյալ իմացությունը կարող է հենք հաղիսանալ ցանկացած օտար լեզվի լիարժեք տիրապետման համար: Այս ամենից հետո պետք է անդրադարձ կատարել այն առանձնահատկություններին, որոնք որոշակի ընդհանրություն ունեն խսպաններենի հետ և վերոհիշյալը անպայմանորեն պետք է հաստատվի և հիմնավորվի համապատասխան օրինակներով: Օրինակների հիմնավորումը առավել հավաստի դարձնելու և ուսանողների արտասանական հմտությունները առավելագույնս զարգացնելու նպատակով լսարանում հարկ է կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ՝ օգտագործելով լսողական և տեսալսողական սարքավորումներ: Այնուհետև, անհրաժեշտ է մանրամասն ներկայացնել խսպանների հնչյունային համակարգը՝

CORRESPONDENCIA ENTRE FONEMAS Y GRAFÍAS

Fonema	Letra	Nombre	Pronunciación	Ejemplo
/a/	A	A	[a]	Casa
/b/	B, v, w	be, uve,uve doble	[b], [β]	beso, vida, whisky
/θ/	C (ante e, i) z (ante a, o, u)	Ce	[k], [θ] , [s]	crecer, cielo, zapato, zoo, zumo
/ch/	Ch	Che	[tʃ]	Chimenea
/d/	D	De	[d], [ð]	Dedo
/e/	E	E	[e]	Elefante
/f/	F	Efe	[f]	Fecha
/g/	G (ante a, o, u ó consonante) gu (ante e, i)	Ge	[g], [ɣ]	Gato, guerra, guitarra

/ /	H	Hache	[no se pronuncia]	hacha, humo
/i/	i, y	I (latina), y (griega)	[i]	mi, rey, muy
/j/	G (ante e, i) j (a, e, i, o, u)	Jota	[X]	jamón, jefe, jinete, joroba, judío
/k/	C (ante a, o, u o consonante) qu (ante e, i) k	Ca	[k]	caballo, cocodrilo, cueva, quezo, kilo
/l/	L	Ele	[l], [L],[l]	Labio
/ll/	LL	Elle	[λ], [j]	llave, ella
/m/	M	Eme	[m]	mama, mesa, milla, mosca, musa
/n/	N	Ene	[n],[ŋ],[ñ]	Niño
/ñ/	Ñ	Eñe	[ñ]	Niño, año
/o/	O	O	[o]	Oso
/p/	P	Pe	[p]	pelota, pipa
/r/, /ṛ/	R	ere, erre	[r], [ṛ]	Arena, arriba, radio
/s/	S	Ese	[s], [z]	Sol
/t/	T	Te	[t]	Tortuga
/u/	U	U	[u]	Una, uva
/ks/, /gs/	X	Equis	[ks], [x], [s]	examen , taxi, xenofobia
/y/	Y	I griega	[i], [j], [λ]	yo, yerno

Վերոհիշյալը ներկայացնելուց հետո պետք է հանգամանալից խոսել խաղաներնի ձայնավորների համակարգի մասին: Նախ անհրաժեշտ է ներկայացնել խաղաներնի ձայնավորների համակարգը եռանկյան տեսքով՝ խոսելով ձայնավոր հնչյունների արտաքերման նրբությունների մասին, որից հետո ներկայացնել նշված հնչյունների դասակարգումն ըստ դրանց արտաքերման տեղի և ձևի.



Ձայնավորների համակարգը լիարժեք ներկայացնելուց հետո անհրաժեշտություն է առաջանում է ուսանողին ներկայացնել խաղաներնի ձայնավորների կապակցման համակարգը. **Երկարքանմեր (diptongos)**՝ ai- (baille, fai-sán, ai-re, vai-vén), au- (au-to, cau-sa, pau-sa, pau-ta, lau-rel), ei, ey - (peine, rey, ley), eu- (deu-da, Eu-ro-pa, feu-dal, neu-ró-lo-go), oi, oy - (oi-go, boi-na, soy, voy), ou- (Sou-sa, bou ('ou' es raro)), ia- (lim-pia, fe-ria, glo-ria, dia-blo, piano), ua- (gua-gua, ag-ua, cuan-to, guan-te), ie- (pien-so, sie-te, vie-ne, pied-ra, mie-do), ue- (fuer-za, sue-na, grue-so, sueg-ra, pues, fue-go, bue-no), io- (lim-pio, pa-tio, ac-ción, ex - cur-sión, es-tu-dio, no-vio, dio, vio), uo- (ar-duo, con-ti-nuo, cuo-ta), iu- (ciu-dad, viu-da, triun-fo), ui- (cui-da-do, Lui-sa, rui-do),

Էլուարքաններ (triptongos)` envidiáis, asociáis, Paraguay, Uruguay, semiautomático, buey, hiato` al-de-a, le-ón, ba-hí-a, o-i-do, fan-ta-sí-a, ինչպես նաև խոսքային շղայում ձայնավորների միաձուլված արտասանության դրույթները, որը խաղանացի լեզվաբնները այն կոչում են սինալեֆա (sinalefa)` **Reducción: se enciende; para Alfonso. Alargamiento: no lo oye; para Ana. Diptongación: bailando en la calle; vivo allí.**

Զայնավորների համակարգը ներկայացնելուց հետո այն կարելի է ամփոփել հետևյալ խաղանական հանրահայտ երգով, որը կամքապնդի արդեն ստացված գիտելիքները՝

A;E;I;O;U.

A;E;I;O;U

Los niños en la escuela dan su lección

Un angelito vela en un rincón

A;E;I;O;U.

A;E;I;O;U

La “a”, la “a”,

La “a” es como un perrito, que dice “gua”

“gua,” “gua”,

La “e”, la “e”,

La “e” es un borreguito, que dice “me-e-e-e”

La “i”, la “i”,

La “i” es una muñeca, que llora “iiiiiiiiii”,

La “o”, la “o”,

La “o” es una rosquilla, la quiero yo,

La “u”, la “u”,

La “u” es de caña verde, caña bambú.

Padre nuestro, maestra y maestro

Ave María, la noche con el día.

El burro tiene orejas y cuatro patas

La niña que no estudia, va al cuarto de las ratas.

A;E;I;O;U.

A;E;I;O;U

Զայնավոր հնչյուններից հետո անհրաժեշտ է համապարփակ ներկայացնել խաղաներնի բաղաձայն հնչյունների արտասանական առանձնահատկությունները՝

/p/ bilabial, no líquida, oral, grave, difusa, oclusiva, sorda.

/b/ bilabial, no líquida, oral, grave, difusa, sonora.

/f/ labiodental, no líquida, oral, grave, difusa, fricativa, sorda.

/t/ dental, no líquida, oral, grave, difusa, oclusiva, sorda.

/d/ dental, no líquida, oral, aguda, difusa, sonora.

/θ/ interdental, no líquida, oral, aguda, difusa, fricativa, sorda.

- /c/ palatal, no líquida, oral, aguda, difusa, oclusiva, sorda.
- /y/ palatal, no líquida, oral, aguda, densa, sonora.
- /s/ alveolar, no líquida, oral, aguda, densa, fricativa.
- /k/ velar, no líquida, oral, grave, densa, oclusiva, sorda.
- /g/ velar, no líquida, oral, grave, densa, sonora.
- /x/ velar, no líquida, oral, grave, densa, fricativa, sorda.
- /m/ bilabial, nasal, grave, difusa.
- /n/ alveolar, nasal, aguda, difusa.
- /ñ/ palatal, nasal, densa.
- /l/ alveolar, líquida, oral lateral, difusa.
- /r/ alveolar, líquida, oral vibrante, floja.
- /rr/ alveolar, líquida, oral vibrante, tensa.

Վերոհիշյալ դասակարգումը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է բացատրել խապաներենի բաղաձայն-բաղաձայն և բաղաձայն-ձայնավոր հնչյունների կապակցված արտասանության դեպքերն ու առանձնահատկությունները, որ կոչվում է **էնկադենամինսոն** (*encadenamiento*)՝ reducción : /s+s/ los sabores, alargamiento : /r+r/ color rojo /l+l/ el loco /n+n/ con nada, modificación en la articulación : /d+d/= [ð] El Madrid de mi niñez, resilabificación : consonante + vocal los amigos.

Հնչյունային, ինչպես նաև շեշտի և հնչերանգի առանձնահատկությունների, լիակատար տիրապետումն, այնուհետև, պետք է իր գործնական դրսերումը ստանա կենդանի խոսրում, որը հղվում է բանավոր վարժությունների միջոցով, որտեղ կարևոր դեր են խաղում շուտասելուկները, ինչպես օրինակ՝

Siete han sido sentenciados
Por Santiago y Sebastian
Y a la hora de la siesta
Sentados los siete están.
Serios sentados los siete
Se dicen con gran pesar
Por no pronunciar la S
Sentadidos han de estar.
El amor es una locura que
solo el cura lo cura,
pero el cura que lo cura,
comete una gran locura.

Այսպիսով, հայալեզու լսարանին խապաներենի հնչյունային առանձնահատկությունները դասավանդելիս անհրաժեշտ է լսարանում կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ, ապահովել հոգեբանական լիարժեք հենք, որը կստեղծի համապատասխան միջավայր՝ ինտերակտիվ մեթոդի կիրառմամբ, բոլոր ուսանողներին ողջ դասապրոցեսի մեջ ակտիվորեն ներգրավելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պողոսյան Պ. Ա. Հայոց լեզու, Երևան, 1969:
2. Alcón S. E. Bases lingüísticas y metodológicas para la enseñanza de la lengua inglesa. Castellón de la Plana, 2002.
3. Cataño M. C. R, Dieste M. W. Enfoques teóricos para la adquisición de una segunda lengua desde el horizonte de la práctica educativa. México, 2014.
4. Deprez Ch. Les enfants bilingües, langues et familles. París, 1994.
5. Krashen St. The natural approach: Language acquisition in the classroom. Michigan, 1983.
6. Vygostky L. El desarrollo de los procesos psicológicos superiores. Barcelona, 1989.
7. Vygostky L. Pensamiento y lenguaje. Buenos Aires, 2010.
8. Saroyán L. Fonética teórica de la lengua española. Ereván, 2014.
9. URL: http://www.educationworld.com/a_curr/strategy/strategy036.shtml

Լ. САРОЯН – К вопросу о преподавании фонетических особенностей испанского языка в армянской аудитории. – Статья посвящена различным подходам преподавания фонетических особенностей испанского языка в армянской аудитории. Во время преподавания фонетических особенностей в первую очередь необходимо обеспечить социально-психологический климат в аудитории. Применение как интерактивного метода, так и новейших технологий наряду с соответствующим дидактическим материалом дают возможность более углубленного изучения системы гласных и согласных испанского языка, формирования дифтонгов и трифтонгов, а также особенностей слитного произношения вышеуказанных единиц.

Ключевые слова: фонетические особенности, психологический настрой, дифтонг, трифтонг, синалефа, скороговорки, новейшие технологии, интерактивный метод, гласный/согласный, дидактический материал, студентоцентричный подход

L. SAROYAN – On Some Ways of Introducing Specific Features of Spanish Phonetics in the Armenian Classroom. – The paper studies the ways of teaching some phonetic peculiarities of Spanish, particularly the pronunciation of Spanish sounds, dypthongs, triptongs, synalefs, etc., which can cause difficulties for the Armenian native speakers. The interactive Jigsaw technique is an effective tool for obtaining the desired results in the teaching process. The use of didactic material (listening materials, video materials) is a necessary condition for creating an effective classroom. In order to organize a student-oriented classroom it is of great importance to guarantee a free psychological atmosphere in which students will be incited to participate actively in the learning process.

Key words: phonetic peculiarities, dypthongs, triptongs, synalefs, tongue-twisters, phsycological atmosphere, student-oriented classroom, didactic material, new technologies, vowel/ consonant, interactive method